

128 Այլ տեսեալ թէ ունչս առնելով,
 Զիւր վերջին գիրք բաւ թուելով,
 Պատասխանէր պատճառելով,
 Սարգիս լըռէր հառաչելով:

129 Ո՛վ փառամոլ հիւանդ սրբոյ,
 Որ թէպէտեւ դիտէ յայտնի
 Զանձին վրտանդ ի միւս կենի,
 Բայց դեղ չառնու զի անարգի:

130 Յետ այնորիկ իբրեւ աճէր
 Ախտն Յակոբու՝ որ մահաբեր,
 Յորդորակաւ այլոց հաճէր
 Ընտրել Գահին զայլ ոմն ի տէր:

131 Յայնժամ ապա Յակոբ սերտիւ,
 Ասէր Սարգսի ամոք բանիւ,
 Կաշուլ զԱթոռն ախորժ սրբոյ,
 Լեալ Պատրիարք տեղւոյն յարգիւ:

132 Իսկ Սարգիս մեր հրրաժարմամբ,
 Մինչեւ ապայ մեծաւ երդմամբ,
 Յայտնէր նրմա ստուգութեամբ,
 Զոչ կամիլ գոլն ընդ նոյն բեռամբ:

133 Յետոյ իբրեւ յայտնէր նոյն բան
 Սամուէլի եւրս բերան,
 Յակոբ այսպէս ոճիւ կոծման
 Ողբայր Սարգսի դէմ յանդիման:

134 Վայ քեզ Յակոբ հեգ աբելայ,
 Զոր այլք երդմամբ հերքեն, ահա
 Կալար դու զայն որպէս ագահ
 Զամբս յալովս՝ ցորբս ներկայ: